

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

2011 թվականին (հունվար-դեկտեմբեր) ամիսներին մարզի արդյունաբերական ձեռնարկություններն ընթացիկ (գործող) գներով թողարկել են 59,014.58 միլիոն դրամի արդյունաբերական արտադրանք 2010 թվականի 47,535.04 միլիոն դրամի դիմաց կամ արտադրանքի ծավալը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ կազմել է 124.1%, ծավալի բացարձակ աճը՝ 11,479.54 մլն դրամ:

Մարզի արդյունաբերության հիմնական տեսակների ծավալները, աճերը և դրանց տեսակարար կշիռները 2011թվականին ունի այսպիսի տեսք՝

- մշակող արդյունաբերություն 49,664.32 մլն դրամ, ծավալի աճը՝ 122.9% և տեսակարար կշիռը՝ 84.2%,
- հանքարդյունահանումը համապատասխանաբար՝ 7,162.46 մլն դրամ, 125.1% և 12.1%,
- էլ.էներգիայի արտադրությունը՝ 2,187.80 մլն դրամ, 157.5% և 3.7%:

Վերոնշյալ ցուցանիշները վերաբերվում են զուտ արտադրության ծավալներին և չեն ներառում խմելու ջրի, օդի, շոգու, էներգիայի բաշխման ու մատակարարման և աղբահանության ծառայությունների ցուցանիշները:

Ինչպես և հաշվետու տարվա անցած բոլոր ամիսներին, տարեկան ամփոփ արդյունքում ևս մշակող և հանքարդյունահանման արդյունաբերության ճյուղերի արտադրական ցուցանիշների զգալի բարելավումը պայմանավորված է հիմնականում միջազգային շուկաներում մետաղի գների բարձր մակարդակով, ինչպես նաև պարենային ապրանքների գների բարձրացմամբ: Սակայն դեկտեմբեր ամսին, նոյեմբերի համեմատ (ինչպես և նոյեմբերին հոկտեմբերի նկատմամբ) զգալի նվազել է աճի տեմպը արդյունաբերության հիմնական ճյուղերից մշակող արդյունաբերությունում՝ 12.2%-ով, հանքարդյունաբերությունում՝ 41.0%-ով:

Էներգետիկայի ճյուղում, գրեթե անբողջ տարում, ի շնորհիվ մի քանի ՀԷԿ-երի արտադրանքի սահմանված սակագների զգալի աճի, դրամային արտահայտությամբ առկա է աճ 798.36 մլն դրամի չափով: Հաշվետու տարում արդեն մեր կողմից հաշվառվող ՓՇԷԿ-երի ցանկում ավելացել է ևս մեկը՝ Կարբի ջրհոս ՓՇԷԿ-ը, որը սկսել է շահագործվել երրորդ եռամսյակից:

Մշակող արդյունաբերության մեջ ըստ ճյուղերի թողարկված արտադրանքի ծավալներն ընթացիկ գներով ունեն հետյալ տեսքը.

					(հազ. դրամ)
	Ճյուղի անվանումը	2011թ. հունվար-դեկտեմբեր	2010թ. հունվար-դեկտեմբեր	աճը (%)	2011թ. տես. կշիռը մշակող արդյունաբեր. մեջ (%)
1.	Քիմիական արդյունաբերություն	900,209.0	682,320.0	131.9	1.8
2.	Թեթև արդյունաբերություն	1,357,079.0	824,091.0	164.7	2.7
3.	Մանրի արդյունաբերություն	2,802,766.0	2,767,704.0	101.3	5.6
4.	Մեքենաշինություն և սարքաշինություն	1,511,819.0	1,074,382.0	140.7	3.0
5.	Փայտամշակ. և փայտ իրերի արտադր.	77,827.0	116,352.0	66.9	0.2
6.	Մետալուրգիա	42,543,662.0	34,562,035.0	123.1	85.7
7.	Այլ ճյուղեր	470,962.0	393,877.0	119.6	0.9
Ընդամենը		49,664,324.0	40,420,761.0	122.9	100.0

2011 թվականի բոլոր ամիսներին. մշակող արդյունաբերության բոլոր հիմնական ճյուղերն ունեցել են արտադրության ծավալի աճ: Նվազում է արձանագրվել միայն «փայտամշակում և փայտե իրերի արտադրություն»-ում, որտեղ ընթացիկ գներով նախորդ տարվա հունվար-դեկտեմբերի համեմատ պակաս է թողարկվել 38.53 մլն դրամի արտադրանք:

Հարկ է առանձին նշել «Թեթև արդյունաբերության», «Մեքենաշինության և սարքաշինության», նաև «Քիմիական արդյունաբերության» ճյուղերի ձեռնարկությունների մասին, որոնք 2010թ. հունվար-դեկտեմբերի համեմատ թողարկել են համապատասխանաբար 532.99 մլն, 437.44 և 217.89 մլն դրամի ավելի արտադրանք, կամ աճի տեմպերը կազմել են 164.7%, 140.7% և 131.9%: Մարզի թեթև արդյունաբերության ընկերություններն ապահովել են զգալի աճ՝ 5 հիմնական ձեռնարկությունները գտել են գործընկերներ և իրացման կայուն շուկաներ, վերջին ամիսներին սկսել է կայուն աշխատել նաև Սպիտակի «Վանուի» ԲԲԸ-ն: 2011 թվականին արտադրանք չեն տվել մարզի 19 արտադրական ձեռնարկություններ: Մյուսնք այն ձեռնարկություններն են, որոնք դադարեցրել են արտադրական գործունեությունը տարբեր պատճառներով:

(լուծարում, ձեռնարկչատիրական գործունեության ոլորտի փոփոխություն, անվանափոխում և այլն): Արտադրության ծավալները նվազեցրել են 40 ձեռնարկություն:

Մարզի արտադրանքի ընդհանուր ծավալում զգալի տեսակարար կշիռ ունեն Ալավերդու «Էյ-Սի-Փի» ՓԲԸ-ն՝ 72.09%, «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ն՝ 11.49%, «Ավտոգեն-Ս» ՍՊԸ-ն՝ 1.94%, «Ձորագետ հիդրո» ՍՊԸ-ն (Ձորահէկ) 1.60%., «Վանաձոր Խիմայրում» ՓԲԸ-ն՝ 1.14%, «ԱՏ Գրեյն» ՍՊԸ-ն՝ 1.17%:

Ըստ տարածաշրջանների 2011 թվականին թողարկված արտադրանքի ծավալն ընթացիկ (գործող) գներով ունի այսպիսի տեսք.

Տարածաշրջանի անվանումը	2011թ. հունվար-դեկտեմբեր	2010թ. հունվար-դեկտեմբեր	Աճը		Տեսակարար կշիռը (%)
			Բացարձակ	(%)	
Սպիտակ	1,048,468.0	1,432,178.0	-383,710.0	83.1	1.78
Տաշիր	997,947.0	624,084.0	+373,863.0	159.9	1.69
Գուգարք	1,547,880.0	729,418.0	+818,462.0	212.2	2.62
Ստեփանավան	558,073.0	546,240.0	+11,833.0	102.2	0.95
Թումանյան	49,706,929.0	40,204,246.0	+9,502,683.0	123.6	84.23
Վանաձոր	5,155,282.0	3,998,870.0	+1,156,412.0	128.9	8.74
Ընդամենը	59,014,579.0	47,535,036.0	+11,479,543.0	124.1	100.0

2011 թվականին արտադրության ծավալը նվազել է միայն Սպիտակի տարածաշրջանում, որտեղ պակաս է թողարկվել 383.71 միլիոն դրամի արտադրանք: Պատճառը՝ այս տարածաշրջանում առաջատար «ԱՏ Գրեյն» ՍՊԸ-ի (այլուրի արտադրություն) արտադրության ծավալների կրճատումն է:

Ըստ տարածաշրջանների պատկերը հիմնականում նույնն է՝ գերակշռող է Թումանյանի տարածաշրջանի դերը, զգալի է Վանաձոր քաղաքի արդյունաբերության տեսակարար կշիռը:

Թերևս դանդաղ, բայց զգալի է մարզի արդյունաբերության ցուցանիշների ապակենտրոնացումը Թումանյանի տարածաշրջանից դեպի մարզի այլ տարածաշրջաններ: Սակայն դեռևս առկա է բոլոր տարածաշրջաններում արդյունաբերության կախվածությունը մեկ (երկու) ձեռնարկությունից:

Պետք է նշել, որ մարզի արդյունաբերության 2011 թվականի ցուցանիշը առավելագույնն է մարզի կազմավորման տարվանից սկսած:

2011 թվականին կայուն, լիարժեք վերագործարկվել են Վանաձորի «Բազում-Ֆիրմա» ԱԿ-ն ու Սպիտակի «Վանուհի» ԲԲԸ-ն և շարք է մտել նոր ՓՇԷԿ՝ «Կարբի Ջրհոս» ՓՇԷԿ-ը: Արդյունքում բացվել (վերաբացվել) է 211 նոր աշխատատեղ: Իր արտադրական հզորություններն ավելացրել է նաև նախկին «Բ.Դարբինյան-Ստիլիսա» ՍՊԸ-ն, ներկայումս «Գլորիա գլխամասային կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն, որի շնորհիվ բացվել է 142 նոր աշխատատեղ:

Ըստ մարզի զարգացման ծրագրի 2011 թվականի ՏԱՊ-ի մոնիտորինգի գնահատման և հաշվետվության, հաշվետու տարում մարզի արդյունաբերության ոլորտում ներդրումների ընդհանուր ծավալը կազմել է ավելի քան 42 միլիարդ դրամ:

2011 թվականի 4-րդ եռամսյակի արդյունքներով մարզ արդյունաբերության ոլորտում աշխատողների միջին ցուցակային թիվը կազմել է 4456 մարդ, որը 546-ով ավելի է 2010 թվականի համապատասխան ցուցանիշից:

2011 թվականի տարեկան արդյունքներով մարզի արդյունաբերության ցուցանիշներն բնեղեն արտահայտությամբ ըստ 20 հիմնական արտադրատեսակների հետևյալն են՝

	Արտադրանքի անվանումը	Չափի միավորը	2011թ.	2010թ.	Բացարձակ աճը
1.	Էլեկտրաէներգիա	մլն. կվտ.ժամ	186.2	182.6	3.6
2.	Էլեկտրաշարժիչներ	հատ	3890	3330	560
3.	Ավտոգենային սարքավորումներ	հազ. հատ	87.6	69.9	17.7

4.	Տրակտորներ	հատ	5	9	-4
5.	Պոլինձ` պղնձի խտանյութում	տոննա	2289.6	2077.2	212.4
6.	Պոլինձ կոնվերտորային (սև պղինձ)	տոննա	8876.7	7643.9	1232.8
7.	Պղնձի խտանյութ	տոննա	10605.3	9233.1	1372.2
8.	Մինթետիկ կորունդ	կգ.	12116.3	3363.0	8753.3
9.	Լաքաներկանյութեր	տոննա	65.6	106.1	-40.5
10.	Լվացող, մաքրող և օսլայող միջոցներ	տոննա	446.5	565.5	-119.0
11.	Շինափայտ	տոննա	250.2	376	-125.8
12.	Ե/բետոնյան իրեր և կոնստրուկցիաներ	տոննա	4616.8	5706.3	-1089.5
13.	Երեսապատման սալեր բնական քարից	տոննա	15.6	13.4	2.2
14.	Ոչ հանքային շինանյութեր	հազ. տոննա	82.89	176.03	-93.14
15.	Այլումինե մետաղապլաստ դոներ, պատուհան.	հատ	1125	1050	75
16.	Կուրտկաներ, վերնաշապիկներ	հազ. հատ	252.2	205.6	46.6
17.	Պանիր	տոննա	514.3	422.1	92.2
18.	Ալյրային	տոննա	3986.0	8211.0	-4225.0
19.	Հրուշակեղեն	տոննա	4063.9	8289.9	-4226.0
20.	Մակարոնեղեն	տոննա	760.7	391.6	369.1

2011թ. հունվար-դեկտեմբերին մարզի արդյունաբերական ձեռնարկությունների կողմից թողարկված հիմնական արտադրատեսակների ծավալները` կոնվերտորային պղնձի, պղնձի հանքանյութի, ավտոգենային սարքավորումների, էլեկտրաշարժիչների, սինթետիկ կորունդի, հագուստի, պանրի, բնեղեն արտահայտությամբ աճել են:

«Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ

2011 թվականին ընկերության ընդհանուր ներդրումները կազմել է 40.0 միլիոն դրամ, որի արդյունքում.

- Շահագործման է հանձնվել Այրում-Ճոճկան ձորում Նահատակ գետի վրա շրջանառվող ջրի համակարգը,
- Ավարտվել է շահագործումից հանված առաջին պոչամբարի ռեկուլտիվացիան:

Ներդրումների շնորհիվ հնարավոր դարձավ մակաբացման ծավալները մեծացնել, ինչպես նաև նոր պոչամբարում կառուցել ջրամատակարարման համակարգ և դրանով զգալիորեն բարելավել բնապահպանական վիճակը:

2011թ. ընթացքում արդյունահանվել է 275000 տոննա հանքաքար, արտադրվել է 11500 տոննա պղնձի խտանյութ:

Հաշվետու տարում կոմբինատում աշխատողների թիվը կազմել է 600 մարդ, միջին աշխատավարձը` 140 հազար դրամ:

«Վալլեքս գրուպ»

2011 թ. ընթացքում Վալլեքս խմբի ընկերություններն ընդլայնել են գործունեությունը Լոռու մարզում: Մասնավորապես` տարվա ընթացքում ընկերությունների խումբը շարունակել է Ալավերդու տարածաշրջանում աշխատանքով ապահովել ավելի քան 1200 աշխատակիցների (հիմնական մասը` «Արմենիան Քափըր Փրոգրամ» և «Թեղուտ» ՓԲԸ-ներում), որոնց միջին ամսական աշխատավարձը կազմել է մոտ 127 հազ դրամ:

«Էյ-Մի-Փի» ՓԲԸ

Ըստ նախնական գնահատականների, 2011թ.-ին խմբի առաջատար ընկերություններից «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի արտադրանքի ծավալը ընթացիկ գներով կազմել է մոտ 42.6 մլրդ դրամ, նախորդ տարվա 34.6 մլրդ դրամի փոխարեն: Ընթացիկ գներով արտադրանքի ծավալի բարձր աճի վրա ազդել են 2 գործոններ` մետաղների միջազգային գները և վերամշակված խտանյութի ծավալը: Տարվա ընթացքում ընկերությունն իրացրել է մոտ 8.8 հազ տոննա չգտված պղինձ` 2010թվականի մոտ 7.7 հազ տոննայի փոխարեն:

2011թ. գործունեության հիմնական ցուցանիշներն ամփոփված են աղյուսակում.

Ցուցանիշը	2008թ. փաստ.	2009թ. փաստ.	2010թ. փաստ.	2011թ. փաստ.	2012թ. կանխատ.
Իրացվող արտադրանքի ծավալը (միլիոն դրամ)	20444.1	22480.6	36709.9	44403.0	46000.0
որից արտահանում այլ երկրներ	100%	100%	100%	100%	100%

Հիմնական արտադրատեսակներ՝ անգուտ պղինձ (տոննա)	6500	6900	7700	8800	9940
Աշխատողների միջին ցուցակային թիվ (մարդ)	1039	618	648	663	663
Մեկ աշխատողի միջին ամսական աշխատավարձը (հազար դրամ)	107.4	89.2	111.6	121.6	150.0

2010-2011թթ-ի ընթացքում արտացոլիչ վառարանի վերակառուցումը նպաստեց 2011թ-ին արտադրողականության բարձրացմանը: 2012թ-ին պղնձի բարձր պարունակությամբ ԶՊՄԿ խտանյութի ավելի մեծ քանակությամբ վերամշակումը հնարավորություն կտա արտադրելու մոտ 10 հազ տոննա չգտված պղինձ:

Ընկերության կողմից 2011թ.-ին 550 մլն դրամը գերազանցող արժեքով ներդրումներ են կատարվել ներարտադրական ենթակառուցվածքներում, որոնց հիմնական մասը՝ բնապահպանական նպատակով վերակառուցվող նոր ծխատարի կառուցման ուղղությամբ՝ մոտ 360 մլն դրամ և արտացոլիչ վառարանի վերակառուցման ուղղությամբ՝ մոտ 190 մլն դրամ:

Ծխատարի կառուցման արդյունքում զգալիորեն նվազել է գործարանի կողմից արտանետումների բացասական ազդեցությունը Ալավերդու քաղաքում: Նոր ծխատարը գործում է 2011թ. հոկտեմբերի 1-ից: Այս միջոցառման իրականացման շնորհիվ Ալավերդի քաղաքում արտանետումների քանակը գրեթե չի գերազանցում սահմանային թույլատրելի նորման:

«Թեղուտ» ՓԲԸ

2011 թվականին շարունակվել են Վալլեքս խմբի հիմնական ներդրումային ուղղության՝ Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման նախապատրաստական աշխատանքները: 2009-2011թթ-ի ընթացքում այս ուղղությամբ կատարվել են մոտ 36.1 մլրդ. դրամի ներդրումներ, որոնց հիմնական մասը՝ 2011թ.: Մասնավորապես՝ 2011թ. կատարվել են շինարարական և կապիտալ բնույթի այլ նախապատրաստական աշխատանքներ՝ մոտ 5 մլրդ դրամ չափով, հիմնական միջոցների ձեռք բերումներ՝ 7.5 մլրդ դրամ գումարով և սարքավորումների ձեռք բերման կանխավճարներ՝ մոտ 7 մլրդ դրամ գումարով:

Նշված աշխատանքների արդյունքում ձեռք են բերվել ծրագրով նախատեսված՝ հանքի շահագործման համար անհրաժեշտ գրեթե բոլոր սարքավորումները, կատարվել են պոչային տնտեսության համար նախատեսված շինարարական աշխատանքների 80% ից ավելին, գրեթե ամբողջովին ավարտվել են թափոնային տնտեսության ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքները, կատարվել է հարստացուցիչ ֆաբրիկայի սարքավորումների ձեռք բերման մասով նախատեսված ծախսերի զգալի մասը, սկսվել են հաստացուցիչ ֆաբրիկայի հիմնական արտադրական կառույցների շինարարական աշխատանքները, ինչպես նաև՝ հանքում մակաբացման աշխատանքները:

2011 թվականի ընթացքում աշխատողների միջին ցուցակային թիվը կազմել է 616 մարդ, որոնց միջին ամսական աշխատավարձը գերազանցել է 130 հազ. դրամը: Այսօրվա դրությամբ ընկերության աշխատակիցների թիվը գերազանցում է 750-ը:

2012թ-ին սպասվում է ծրագրի իրականացման համար անհրաժեշտ վարկային միջոցների ստացումը, որը զգալիորեն կարագանի ներդրումային աշխատանքների հետագա ընթացքը:

«Մագամար» ՓԲԸ

2011 թվականի ընթացքում կատարվել և ավարտվել են Արմանիսի հաստացուցիչ ֆաբրիկայի շինարարական և սարքավորումների մոնտաժման աշխատանքները: Ներդրումների ընդհանուր ծավալը կազմել է 14.6 մլն. ԱՄՆ դոլար: 2011 թվականի 4-րդ եռամսյակում կատարվել են ֆաբրիկայի կարգաբերման և գործարկման աշխատանքները:

Հաշվետու տարվա նոյեմբերի 5-ին կատարվել է Արմանիսի հաստացուցիչ ֆաբրիկայի պաշտոնական թողարկումը:

Աշխատակիցների ընդհանուր թվաքանակը ընկերությունում կազմում է 357 մարդ: